

Հայաստանի Ազգային Ժողովը, Շաբաթ օր վարչապետ Անդրանիկ Մարգարեանի կողմէ կառավարութեան ծրագրի ներկայացումէն եւ 24 ժամուան դադարէ մը ետք գումարեց արտա-հերթ նիստ մը:

Ազգային ժողովի փոխ նախագահ Գագիկ Ասլանեան յայտնեց, թէ անցող 24 ժամուան ընթացքին խորհրդարանական պատգամաւորական խմբակցութիւնները չեն ներկայացու-ցած կառավարութեան անվտանգութիւն յայտ-նող նախագիծեր, հետեւաբար կառավարու-թեան ծրագիրը կը նկատուի հաստատուած:

(ԱՐՄԷՆՓՐԷՍ)

HORAIRE D'ETE
à partir du 12 juin 2000
du lundi au vendredi
de 8h15 à 14h30
samedi
de 8h15 à 12h30

البنك اللبناني الفرنسي
BANQUE LIBANO-FRANÇAISE

ԽՄԲԱԳՐԱՎԱՐ

ԱՆԵՐԵՐ ՂԵԿԱՎԱՐԸ

Նախագահ Հաֆէզ Ասատի մահով Սուրիան եւ արաբական աշխարհը կորսնցուցին սկզբունքի եւ ազգային արժանապատուութեան պաշտպան հզօր ղեկավար մը եւ քաղաքականութեան հսկայ մը:

Անոր մահով աւարտին կը հասնի գաղափարա-կան պայքարի եւ իրապաշտ ու ուղջմիտ ղեկավար-ութեան պատմական ժամանակաշրջան մը, որ յատկանշուեցաւ նախագահ Հաֆէզ Ասատի բացա-րիկ անհատականութեամբ եւ մեծ կարողութեամբ: Փաստօրէն, 20րդ դարու վերջին երեսուն տարիներու Մերձաւոր Արեւելքի պատմութիւնը համա-զօր պէտք է նկատել նախագահ Հաֆէզ Ասատի կեանքին ու գործին:

Նախագահ Հաֆէզ Ասատ եղաւ իր ժամանակի եւ նախաձեռնող զինուորական մը, գաղափարական ղե-կավար մը, հանճարեղ քաղաքագետ մը, բայց մա-նաւանդ՝ փայլուն ռազմավար մը: Ան վերջ դրաւ Սուրիան քաղաքային եւ տկարացնող շարժումներու, բանաձեւեց եւ գործադրեց քաղաքական, ազ-գային եւ ընկերային այն սկզբունքներն ու նպա-տակները, որոնք Սուրիան դուրս բերին այլ երկիր-ներու եւ միջազգային տարբեր ուժերու ենթակայի վիճակէն ու վերածեցին արաբական դատին ամուր դրօշակիրին: Նախագահ Հաֆէզ Ասատ հաստա-տեց կայուն իշխանութիւն մը, որուն շնորհիւ եր-կիրը ձեռք բերեց անորոշութեան եւ անշեղ կեդրով բռնեց պետութեան հզօրացումի ուղին:

Գաղափարներու եւ գործնական կեանքի ուրոյն համադրութեամբ նախագահ Հաֆէզ Ասատ ձեռ-նարկեց Սուրիայ վերականգնումի գործընթացին եւ միաժամանակ հետամուտ եղաւ Իսրայէլի բռն-նագրաւած հողերուն՝ Կոլանի բարձունքներուն, Հարաւային Լիբանանի եւ Արեւմտեան Պէրճայի ամբողջական ազատագրումին, ինչպէս նաեւ՝ պա-ղեստինեան դատին արդար լուծումին եւ տարա-գիր ժողովուրդին հայրենիք վերագործին ապահո-վումին: Ան իր բազմաշերտ եւ բարդ պայքարը մղեց լեռնային Սուրիայ ժողովուրդին, բանակին, պետական կառույցին եւ Պաաս Կուսակցութեան վրայ եւ լաճարի միայնակ դիմագրաւեց Իսրայէլի անոր դաշնակիցներուն եւ ռազմավարական գոր-ծարքի՝ Էջ 9

Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԵ ՏՈՔԹ. ՊԱՇՇԱՐ ԱՍԱՏԻ

Յարգելի՛ տղայք՝ Պաշշար Ասատ, Դամասկոս - Սուրիա

Պայքարող նախագահ Հաֆէզ Ասատի մահը մեծ կորուստ մըն է Լիբանանի, Սուրիայ եւ արաբ ազգային: Վստահ ենք, որ պիտի շարունակէք նախագահ Ասատի երթը՝ պահպանելով ուժի տեղը ու այն սկզբունքները, որոնց հաւատարմութեամբ ու անոնց համար պայքարած էք ան՝ հաս-տատելու խաղաղութիւնը եւ վերատիրանալու արաբա-կան բոլոր իրաւունքներուն:

Զեպի եւ ձեր յարգարժան ընտանիքին կը ներկայացրու-նենք մեր սրտագին ցաւակցութիւնները՝ Աստուծո՛վ խնդրելով, որ ձեպի ներշնչէ համբերութիւն եւ մխիթա-րութիւն, եւ պահպանէ Սուրիայ փառքն ու արժանապա-տուութիւնը:

Հ. Յ. ԴԱՆՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԵ ՍՈՒՐԻՈՅ ՊԱՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Արարական ընկերակցական Պաաս Կուսակցութեան շրջանային ղեկավարութեան յարգելի ընկերներ,

Դամասկոս - Սուրիա

Մեծ ցաւով ու տխրութեամբ ստացանք նախագահ Հաֆէզ Ասատի՝ շրջանի խաղաղութեան եւ կայունութեան ռազմավարային եւ արարներու իրաւունքներու պաշտպանին մահուան յուրը:

Լիբանան կը սպայ անոր անդարձ մեկնումը, ինչպէս կը սպայ քոյր Սուրիան եւ ամբողջ արաբ ազգը, որովհետեւ անոր ազգային կեցուածքներն ու հայրենասէր սկզբ-բունքները մեծ դեր ունէին արաբ ժողովուրդի արդար իրաւունքներու պահպանումին եւ սիւնական ախոր-ժակներուն ուղի մ արաբական իւրաքանչիւր հողի կտորի պաշտպանութեան մէջ: Ան մինչեւ վերջ կառչած մնաց արդար եւ ամբողջական խաղաղութեան սկզբունքներուն ու հողի փոխարէն խաղաղութիւն սկզբունքին:

Հ. Յ. ԴԱՆՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ արա-բական ընկերակցական Պաաս Կուսակցութեան ու Սու-րիայ երբայր արաբ ժողովուրդին կը ներկայացնէ իր անկեղծ ցաւակցութիւնները՝ թող Աստուած րարեցուց-րվայ անոր հոգիին հանդէպ եւ ձեպի ներշնչէ համբերու-թիւն ու մխիթարութիւն:

Հ. Յ. ԴԱՆՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Տար. ք՝ Էջ 2

ՄԱՐՏԻ ԿԱՐԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՌԱՋՆՈՐԴ, ԱՐԱՔԱԿԱՆ ԴԱՏԻ ԱՆՆԱՇԱՆՋ ՄԱՐՏԻ ԵՆԱԿԱԳԱՐ ԸԱՖԵՉ ԱՍԱՏԻ


Արաբական աշ-խարհն ու Սուրիան վաղը հրաժեշտ պիտի տան Սուրիայ նախա-գահ Հաֆէզ Ասատի, որ մահացաւ Շաբաթ կէ-սօրին: Երջանային ու միջազգային դեմքեր ներկայ պիտի ըլլան յուղարկաւորութեան ղեկավարի մը, որ անց-նող երեսնամեակին իր անջնջելի դրոշմը դրաւ Սուրիայ, ինչպէս նաեւ՝ շրջանի պատմութեան վրայ:

Ասատի մահուան լուրի յայտարարութե-նէն անմիջապէս ետք, Սուրիայ խորհրդարա-նը արտակարգ նիստ մը գումարեց եւ փոփո-խութեան ենթարկեց սահմանադրութեան այն յօդուածը, որ կը ճշ-դէ նախագահութեան թեկնածուին նուազագոյն տարիքը, որ քա-նաւան էր: Խորհրդա-րանական յանձնա-խումբը յօդուածը քա-րէփոխեց՝ 34ի իջեցնե-լով թեկնածուին տա-րիքը: Այս ձեւով Ասա-տի տղան՝ Պաշշար, որ 35 տարեկան է իրա-ւունք կ'ունենայ նա-խագահութեան թեկ-նածու դառնալու:

Սորիւրդարանի ուրոշումէն ետք արտա-կարգ նիստ մը գումար-եց նաեւ իշխող Պաաս Կուսակցութեան ղեկա-վարութիւնը, որ միա-ձայնութեամբ նախա-գահութեան թեկնածու յայտարարեց Պաշշա-րը: Առաջարկը պիտի փոխանցուի խորհրդ-դարանին, որ վաւե-րացնելէ ետք պայն՝ հանրաքուէ մը պիտի կազմակերպէ նախա-գահի ընտրութեան համար: Խորհրդարա-նի նախագահ Ապտէլ-քաւտըր Քաւտուրա յա-նաշիկայ նիստին թուական ճշդեց 25 Յու-նիսը: Կը նախատես-ւի, որ խորհրդարանը միաձայնութեամբ որ-դէգրէ Պաաս Կուսակ-ցութեան ներկայացու-ցած առաջարկը:

Անցնող քանի մը ամիսներուն ընթաց-քին, նախագահ Ասատ այլապէս առիթներով շրջանային ու միջազ-գային մակարդակնե-րու վրայ յառաջ մղած էր Պաշշարը, որ Քրիտա-նիա ուսանած ակնա-բուժ է, ինչպէս նաեւ՝ գնդապետ սուրիական բանակին մէջ: Մինչեւ 1994, Հաֆէզ Ասատ իր-րեւ իր յաջորդը կը պատրաստէր անորա-նիկ պաւսկը՝ Պասէլը, որ ինքնաշարժի արկա-ծի մը զոհ գնաց:

Միջին Արեւելքի հարցերու մասնագետ-ներն ու մեկնաբաններ դիտել կու տան, որ Պաշշարի նման մեղմ անձնաւորութեան մը համար դժուար պիտի



ՀԱՅԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ՊԼՈՔԸ ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԵ ՏՈՔԹ. ՊԱՇՇԱՐ ԱՍԱՏԻ

Յարգելի՛ տղայք՝ Պաշշար Ասատ, Դամասկոս - Սուրիա

Կը գգանք, թէ որքան ահաւոր է ձեր եւ արաբ ազգի կորուստը՝ մահովը ղեկավար Հաֆէզ Ասատի, որ իր կեանքը արժեւորեց սատարելով արդար դատերուն ու իսրայէլեան ոտնձգութեան ուղի մ արաբական իրաւունք-ներու պաշտպանութեան:

ՀԱՅԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ՊԼՈՔԸ ՏԱՐ. ք՝ Էջ 3

ՀԱՅԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ՊԼՈՔԸ ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԵ ՍՈՒՐԻՈՅ ԱՂԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

Սուրիայ Ազգային Ժողովի յարգելի եղբայրներ,

Դամասկոս - Սուրիա

Այսօր կորսնցուցինք հանճարեղ ռազմավար մը, որ պայքարած է եւ իր կեանքը նուիրած է ազգային ու հայրենասիրական գաղափարներուն:

ՀԱՅԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ՊԼՈՔԸ ՏԱՐ. ք՝ Էջ 3

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՆԱԽԱԳԱՐ ՀԱՖԵՉ ԱՍԱՏԻ ՄԱՅՈՒՄ ԱՌԻԹՈՎ

Արամ Ա. կաթողիկոս երկէ հետեւեալ ցաւակցական գիրք յղեց գնդ՝ Պաշշար Ասատին -

Խոր ցաւով իմացանք Սուրիայ Արարական Հանրա-պետութեան իմաստուն եւ քաջ նախագահին, արաբա-կան արդար դատի մեծ ախոյեանին ու ձեր սիրելի հօր՝ ցօրաբար Հաֆէզ Ասատի մահը:

Ձօր Հաֆէզ Ասատ նոր ու փայլուն էջ մը բացաւ սուրիական հայրենիքի ժամանակակից պատմութեան

Տար. ք՝ Էջ 3

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՆՁԱՄԲ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՆԱԽԱԳԱՐ ՀԱՖԵՉ ԱՍԱՏԻ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Արամ Ա. կաթողիկոս անձամբ պիտի մասնակցի նա-խագահ Հաֆէզ Ասատի յուղարկաւորութեան:

Վեհափառն ընկերակցող պատուիրակութեան մաս պիտի կազմեն Բերիոյ թեմի առաջնորդ Սուրբ Արք. Գաթարոյեան, Կիպրոսի Հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ Տ. Վարուժան Եպս. Հերկեյեան, Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան եւ Տիրայր Եպս. Փանոսեան:

